«Ֆրանցիսկոսը Պապը նույնպես հայ-ադրբեջանական սահմանին խաղաղություն հաստատելու կոչ է արել»,- նշում է դեսպանը:

Հուլիսի 12-ից ՀՀ Տավուշի մարզի ուղղությամբ Ադրբեջանի զինված ուժերի հարձակման արդյունքում լարված իրավիճակ է գրանցվել Հայաստանի հյուսիս-արևելքում: «La Nación»- ի հետ հարցազրույցի ընթացքում դեսպան Էսթերա Մկրտումյանն անդրադարձել է հակամարտության ծագմանը և նշել, որ ստեղծված իրավիճակը սպառնում է ոչ միայն հակամարտության մեջ ներգրավված երկրների, այլև ողջ Մերձավոր Արևելքի կայունությանը:

Հարց. Ինչպե՞ս է ծագել հակամարտությունը, որի արդյունքում հայկական գյուղերը նոր հարձակման են ենթարկվել:

Էսթերա Մկրտումյան. Հակամարտությունը սկսվել է Խորհրդային միության փլուզումից տարիներ առաջ: 1988թ.-ի փետրվարին Հարավային Կովկասի Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Գերագույն խորհուրդը սահմանադրական որոշում կայացրեց՝ Խորհրդային Ադրբեջանի իրավասությունից Խորհրդային Հայաստանի իրավասության տակ անցնելու պահանջով: Այդ ինքնավար մարզի բնակչությունը հիմնականում հայ քրիստոնյաներ էին: Հազարամյակներ շարունակ այս շրջանում հայերը մեծամասնություն են եղել: Ադրբեջանի բռնի արձագանքն ողջ երկրի տարածքում հանգեցրեց հայ քրիստոնյաների նկատմամբ էթնիկ զտման և ցեղասպանության հեռանկարով մի շարք հետապնդումների և ջարդերի: Ադրբեջանը, որի բնակչությունը թուրքական ինքնություն ունի, դավանում է իսլամ և կրում է նույն լեզուն ու մշակույթն ինչ Թուրքիան, մշտապես վայելում է վերջինիս անվերապահ աջակցությունը: Հայերը, հանուն իրենց ինքնորոշման իրավունքի, ոտքի ելան իրենց շրջանի ինքնապաշտպանության համար և կարողացան հռչակել Լեռնային Ղարաբաղի անկախությունը 1991թ.-ի սեպտեմբերի 2-ին՝ ԽՍՀՄ-ի փլուզումից առաջ: Սկսվեց պատերազմ, որի պատճառով հազարավոր մարդիկ զոհվեցին, և դրանից հետո, 1994թ.-ի մայիսին Հայաստանը, Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը ստորագրեցին զինադադարի պայմանագիր, որը վերահսկվում է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից: Այդ նույն կազմակերպությունը հիմնեց Մինսկի խումբը՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի՝ որպես ԵՄ ներկայացուցչի համանախագահությամբ, որն ավելի քան 25 շարունակ մեծ ջանքեր է ներդնում հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցությունների վարման համար: Մյուս կողմից, սա միակ հակամարտությունն է, որի բանակցային գործընթացում ներգրավված են ՄԱԿ-ի միջազգային մանդատով օժտված և վերջինիս հովանու ներքո գործող միջնորդ կազմակերպությունները: Միևնույն ժամանակ, Ադրբեջանը, իր պատերազմական հռետորաբանության և սպառազինման մրցավազքին զուգահեռ, մշտապես խախտում է Լեռնային Ղարաբաղի շփման գծի շուրջ հրադադարը: Սակայն հուլիսի 12-ից Ադրբեջանի հարձակումներն ուղղված են Հայաստանի հետ անմիջական սահմաններին, Տավուշի մարզում՝ հրետանու և անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ:

Հարց. Կա արդյո՞ք Հայաստանի ատոմակայանի վրա հարձակման սպառնալիք:

Էսթերա Մկրտումյան. Այո, թեև կարող է անհավանական թվալ: Ատոմակայանների վրա հարձակման սպառնալիքի նախադեպեր չկան, քանի որ նման աղբյուրները ծառայում են էլեկտրական էներգիայի արտադրության համար: Զուտ պատկերացում կազմելով թե ինչպիսին կլինի նման հարձակման հետևանքով բնապահպանական և մարդասիրական աղետը՝ միջազգային հանրությունը խիստ մտահոգված է Ադրբեջանի պաշտպանության նախարարության սպառնալիքների առումով: Այդ երկիրը կանգնած է ներքին լուրջ խնդիրների առաջ: Այն կառավարվում է դինաստիայի ռեժիմով, որը չի հարգում

ժողովրդավարության և մարդու իրավունքների կանոնները, իսկ եկամտի հիմնական աղբյուրի՝ նավթի գնի անկման արդյունքում ի հայտ եկած տնտեսական խնդիրները հանգեցրել են նրան, որ երկրի ղեկավարությունը ժողովրդական դժգոհության ալիքը շեղում է դեպի արտաքին այնպիսի խնդիրներ, որոնք խթանում են ազգայնական տրամադրությունները:

Հարց. Կան արդյո՞ք իրավիճակի էսկալացիայի մտավախություններ:

Էսթերա Մկրտումյան. Զինված ուժերի տրամադրության տակ առկա ամենաժամանակակից զինատեսակները միջազգային հանրության մոտ մշտապես մտավախություն են առաջացնում իրավիճակի առավել սրման առումով: Խնդիրն առավել սուր է Թուրքիայի բացահայտ աջակցությամբ. վերջինս, իր նախագահի, ինչպես նաև արտաքին գործերի և պաշտպանության նախարարների միջոցով վերահաստատել է Ադրբեջանին իր լիակատար և անվերապահ համերաշխությունը: Պետք չէ մոռանալ, որ Թուրքիան իրականացրել է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը՝ կոտորելով մեկ միլիոն հայ քրիստոնյաների. մարդկության դեմ հանցագործություն, որը մինչ օրս Թուրքիան չի ճանաչել:

Հարց. Ինչպե՞ս կարող եք բացատրել ռազմական այդ ներխուժումը Կովիդ-19 համավարակի համատեքստում:

Էսթերա Մկրտումյան. Ադրբեջանի ագրեսիվ գործողություններն ամբողջովին հակասում են ՄԱԿ Գլխավոր քարտուղարի կորոնավիրուսի դեմ պայքարի համատեքստում ողջ աշխարհում համընդհանուր հրադադար հաստատելու վերաբերյալ վերջերս արված կոչին: Միջազգային հանրությունը, որին ներկայացնում է Մինսկի խումբը, համանախագահող երկրների ակտիվ մասնակցությամբ զգալի ջանքեր է գործադրում՝ ի նպաստ ռազմական գործողությունների դադարեցման: Ֆրանցիսկոս Պապը նույնպես կոչ է արել խաղաղություն հաստատել հայ-ադրբեջանական սահմանին:

Հարց. Ո՞րն այս ճգնաժամի հետ կապված է Դոնալդ Թրամպի դիրքորոշումը:

Էսթերա Մկրտումյան. Դիրքորոշումներն անձնական չեն, սակայն այն երեք երկրները, որոնք հանդես են գալիս որպես միջնորդ խաղաղ բանակցություններում, այդ թվում՝ ԱՄՆ-ն, լիովին միակարծիք են հակամարտության կարգավորմանը միայն խաղաղ միջոցներով հասնելու անհրաժեշտության առումով՝ պահպանելով երեք հիմնարար սկզբունքները՝ խուսափել ուժի կիրառման սպառնալիքներից և ուժի կիրառումից, հարգել ինքնորոշման և տարածքային ամբողջականության իրավունքները:

Հարց. Այս հակամարտությունն ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ տարածաշրջանում:

Էսթերա Մկրտումյան. Այս հակամարտությունը սպառնում է ոչ միայն ներգրավված երկրների, այլ նաև ողջ տարածաշրջանի և Մերձավոր Արևելքի անվտանգության հաստատմանը: Սա նաև Թուրքիայի ռազմաքաղաքական ծավալապաշտական քաղաքականության մաս է կազմում, քանի որ վերջինս ոչ միայն ռազմական գործողություններ է իրականացրել հարևան երկու երկրներում, ինչպիսիք են Սիրիան և Իրաքը, այլ նաև վերջերս զինված ուժեր է ուղարկել Լիբիա՝ այդպիսով ապակայունացնելով Միջերկրական ծովի արևելյան հատվածը: Հակամարտության հետևանքները կախված են իրավասու մարմինների կողմից՝ հետագայում

անկանխատեսելի հետևանքներով հակամարտության ծավալումից խուսափելուն ուղղված ջանքերից: